


ՏՆՕՐԷՆ-ՆՍՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻՍ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
6: առ երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատրի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԴԻՒՐԱԶԳԱԾ

Աղեքսանդրիայէն երկու պարոններ, մէկը
Պոլսէն գաղթած վաճառական մը, և միւրը
Եւրոպական վարչութեան մը մէջ պաշտօնեայ,
նոյնպէս գաղթական, գրաւորապէս կ'իմացու-

նեն մեղի թէ այլ եւս Փարոսը չեն ուզեր
ստանալ ու կարգալ, վասն զի Դիւպի Պոլիս
յօգուածին քննադատութիւնները իրենց ար-
ժանապատուութիւնը կը վիրաւորէ՝ իբրեւ հայ:
Ինչպէս է որ երկու ընթերցող պակաս
ունենալու պարէ չէ որ կը հարկադրէ զմեզ
հաւաքաբար հանել խնդիրը, — մանաւանդ որ
այլապէս մտածող ընթերցողներու կողմէ
հաւանութեան արտայայտութիւններ եղան
Խմբագրութեան՝ Պ. Լ. Մ. յօդուածին առ-
թիւ որուն համաձայն կը գտնուէին — այլ ա-
նոր համար որ այդ զայրոյթը ու դիւրագգա-
ծութիւնը չա՛ս նախապատմական բարքերու
հետք մը կ'երևի մեղի ու երեւակայել կու-
տայ թէ իրազրութեան ի՛նչ ըլլալը գեւ չի
գիտցողներ, կան եղբի մեր մէջ, նոյն իսկ զար-
գացած համարողներու գասէն: Այս տեսա-
կէտով, կարծէ երկու խօսք:

Եթէ ընթերցող հատարակութեան իւրա-
քանչիւր անգամը պահանջէր այսպէս որ մի-
միայն իր գաղափարներուն համապատասխան
տեսութիւններ պարունակէ թերթը, աւելորդ
է ըսել թէ գրողները լաւագոյն պիտի սե-
պէին իրենց ասպարէզը փոխելով առեւտրա-
կան յանձնակատարութիւն ընել ապագայում
տեսակէն ապրանք կարենալ հայթայթելու
համար «յաճախող»-ին, առանց ունենալու
ինքնուրոյն ճաշակ և դժգոհ, մտածելու, դա-
տելու սղատութիւն, և կամ հարկ պիտի ըլ-
լար անհն մէկուն համար առանձին տպա-
գրութիւն ընել: Բարեբաղդաբար, ասանկ
խօսկ կերպով մեծածոյնները հաղուագիւտ են:

Ուսումնական չէ՞ր գտնուէր այն ազգասիրու-
թիւնը որ կը կայանայ՝ մեր տկարութիւնները
պարտկել և ինքզինքնիս շողջորթել ուզելուն
մէջ: Այս ընթացքով, եւրոպական ամէն մէկ
զարգացած երկրի մամուլը որ կը քննադա-
տէ, կը հեզնէ, կը ձաղկէ իր ժողովուրդին
տկար կողմերը, կը պարտաւէ կամ կը քաջա-
լերէ անոր գաղթային շարժումը, մատնանի
կ'ընէ միջման մէջ անոր ունեցած թերու-
թիւնները, պարզապէս գատապարտելի է:

Լրագրին խօսքը պատգամ չէ, և յօդ-

ուածագիր մը կամ օրագրող մը՝ ամեն պարզ
մահկանացուներու պէս՝ անսխալականութեան
չնորհէն զօրկ է: Ասոր համար, ո՛չ միայն հին
ու նոր աշխարհին մէջ, այլ և նոյն իսկ մեր
յետադարձ իրազրութեան մէջ, բարի սովո-
րութիւն մը կայ որ կը վիճաբանի, կ'ընդգի-
մախօսեն իրարու և այս գաղափարներու շը-
փումով՝ քիչ չատ լոյս կը ցայտէ: Իսկ անոնք
որ, — մեր երկու նամակագիրներուն պէս, —
իրենց բարձրութեան անարժան կը գտնեն՝
գրիչ շարժելը, քիչ մը համբերող կ'ըլլան,
տեսնելու համար թէ հակառակը չի՞ պիտի
ըսուի: Այն օրն իսկ ուր ստացանք իրենց
տիպար-բողոքները, մեր սեզանին վրայ ու-
նէինք արդէն պատասխան մը առ Պ. Լ. Մ.,
հրատարակելու խոստումը, — խոստում զոր կը
կատարենք այսօր Փարոսի նեղ էջերուն նե-
րած սահմանին չափով: Յօդուածագիրը, փո-
խանալ մեղի գէ՛մ կրակ ու բոց կտրելու, որ
հիւրընկալելու ենք այդ յօդուածը, աւելի օգ-
տակար սեպեր է քննադատել «Դիւպի Պո-
լիս»-ը, յստակ կերպով պարզելով ինքն աւելի
գաղափարները որոնք բոլորովին հակառակն
են: Վաղը, Պ. Լ. Մ. կրնայ երկրորդ յօդուա-
ծով մը նորէն պաշտպանել իր տեսութիւնը:
Խմբագրութիւնն ալ ետքի կը վերապահէ իր
կարծիքը, եթէ պէտք մնայ: Լրագրութիւնը
և մամուլի միջոցաւ հանրային ինդիւիդներու ու-
սումնասիրութիւնը այսպէս կը ըլլան, կարծենք:

* * *

Անցողաբար, պզտիկ գիտողութիւն մը:

Բողոքող պարոններէն մէկը, երկրորդը,
իր քաղթին վրայ անիտիւնով բոլոր բարկու-
թիւնը, աւելցուցած էր «թերթերնիդ Փէլ-
լահի լակոտներուն ծախսեցէ՛ք» եթէ կարդա-
ցուցէ՛ք բաւը գործածած ըլլար, շեշտելու
պէտք չի պիտի աւանդինք: Բայց չենք գիտեր
ինչպէ՛ս գրամի գաղափարը եկեր մուտ գտեր
է իր վիրաւորութեամբ արժանապատուութեան
բարձր դժգոհման մէջ տեղ. այդ ծախսեցէ՛ք՝
տասը մլոն հեռուէն հրէականութիւն չի՞ հո-
տիր, և զայն գործածողը այն անհետացած
տիպարներէն մէկը չի՞ յիշեցուներ որոնք «բա-
ժանորդ»-ի հանգամանքը պատուոյ տիտղոս մը
կը նկատեն և թերթի մը քառասուն փարայ
տուած ըլլալուն համար կը պահանջեն որ
խմբագիրը յարգանք բարեւէ զիրենք, երբ
փողոցէն կ'անցնին:

Ա՛հ, եթէ այդքան դիւրագգած ըլլալու
տեղ՝ քիչ մը բարեկիրթ ըլլային...

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Այս վերնագրին սակ թերեւս պատուի
մենէ յորեւ՝ յունական սահմանագլխէն,
Եւրոպական դանդիներէն, Պօլսոյ դեսպա-
նասուններէն եւ կամ արձագանգներ՝ ուսուց-
չական աշխարհէն, քաղականական շրջա-
նակներէ, գերեզմանասուններու շրջափակէն
եւ կամ գոնէ տեղեկութիւններ եզրափակելու
mondayն աշխարհաբանութենէն որ իր նիստերը
կրնէ Սան-Սթեֆանոյի ֆազիլոյի վերան-
սային սակ:

Չէ, մենք շարաք գիշերուան քօնէրին
վրայ պիտի խօսինք, ֆոնտը մը որ համաձայ-
նութիւն կար... Եւրոպականը չըրարուն
համար:

Ընթերցասիրաց ընկերութեան շարաք
գիշերուան երեկոյթին յայտագիրը չէ որ
զմեզ պիտի զբաղեցնէ հոս եւ ոչ ալ տրանսիւն
երեւոյթը, թէեւ փակագծի մէջ պէտք է ըսենք
թէ մին հաճելի էր ըսել եւ միւսը տեսնելը
հրապուրիչ:

Նպասակը ի՞նչ էր այդ երեկոյթին:

Միւսեւոյն տրանսիւն մէջ ժողովել զաղ-
քականութեան մէկ մասը որ գտնուէին պաշ-
տօնասարք եւ վաճառականը, կիկը եւ օր-
իորդը, ուսեալ երիտասարդութիւնը եւ այլ
որ կողմէ ըլլալ, հարուստ եւ այլ որ չէ,
տեղացի ու գաղթականը, արհեստաւոր եւ
արհեստագէտը եւ այսպէսով կազմել մեծ
ընթանիք մը որուն անդամները փոխադար-
ձաբար ճանչնային զիրար եւ յարգէին: Ա-
մեն տեղէ արեւի թերեւս հոս պէտք զգալի
էր այդպիսի նորութեան մը:

Իզմիրցի եւ Պոլսեցի, Արաբկիրցի
ու Կեսարացի, տեղացի եւ գաւառացի
իրար շատ ի՞նչ անգամ կը հանդիպին, զի-
րար կը ֆենադասեն — կը բանաբասեն չըսելու
համար, — իրարու չեն հաւնիր, զիրար չեն
ֆաշեր, եւ հետեւաբար անհամաձայն են ի-
րարու եւ համեմատելիութեան ոգին բոլորու-
թիւն կը պակսի իրենց մէջ. միասին չեն
կրնար խորհիլ, հետեւաբար չեն կրնար գոր-
ծել. եւ այս վիճակին հետեւանք կ'ըլլայ
ազգային անհարաբերութիւն մը որ իր ստ-
տուիկն հասած է Մեհմէտ Ալիի այս երկրին
մէջ:

Ընթերցասիրաց ընկերութիւնը, որ գու-
ցէ սամենէն արեւի մօտէն կը ճանցնար ի-

րաց այս վիճակը, զարկ մը տալով ուղեց այդ մեծած առեւտրուն, բոլորած գաղափարներուն եւ ինքնահաւան անհարթութեան, ու իր հաւաքումներուն առաջինը կազմակերպեց անցեալ շաբաթ: Իր այս մեծահարկին մէջ չը դիմեց ասոր անոր սակին, դարպաս չըտաւ մեծեռն, ասոր անոր պաշտպանութիւնը չը հայցեց: Միմիայն իրեն օգնութեան կանչեց արուեստը՝ իր երաժշտական եւ քանակա-սական ձեռքին սակ եւ անաւանդ միա-ցանք հոն, զոն եղանակ երեկոյթէն, եւ խոս-սացանք վերադառնալ հոն ամեն անգամ որ կանխորհիմք:

Այդ հայ յարկին սակ, հայ արուեստ-գէտներու եւ հայ քանակասներու առջեւ, Ստանքիացիին եւ Էփրեկցիին, Իզմիրցիին ու իպնի պէշեար, Վանցիին եւ Թաշաւցիին կան-հեսանայիին եւ կը մնար միայն քուն հայը, մշտնադիտ հայը:

Եւ երբ անցնենք թէ տեղեր կան որ յորս հայ, միմիայն անգամ իրարու ազգական, կարող չեն միասին գալ, խօսելու կամ վի-ճելու համար, այն ասեմ պիտի հաւա-սանք թէ... միմիայն աշուն ապաստելը շատ դժուար է երկրորդ երեկոյթիին ներկայ գրե-նուելու համար:

ԴԵՊ Ի ՊՈԼԻՍ

• ՊԱՏԱՍԽԱՆ •

Այս խորագրով յօդուած մը երեւոյց փառոսի թիւ 4ի մէջ՝ Լ. Մ. ստորագրութեամբ: Թող կուտանք մեզի բանի մը նկատուածութիւններ ընել այդ առթիւ:

Հաստ գեղեցիկ եւ գովելի յատկութիւն է ինքնա-քննադատութիւնը կամ ինչպէս կըսէր հանգուցեալ Գրիգոր Արքեպիսկոպիտ, ինքնաքննադատութիւնը մը այն ժամանակ միայն կրնայ արագ առաջդիմել, երբ գիտէ թաց աչքով նայիլ իր թերութիւններու վրայ, երբ տղայարար ինքզինքը չի խաբեր, երբ առաջը ու խոհուն քննադատութեան կենթարկէ իր պակասու-թիւնները: Բայց երբ ինքնամոտրակումը կը մղուի դէպի ծայրայեղութիւն, այս պարագայի մէջ նա կը դառնայ միաստեղծ, որովհետեւ կը նետէ յուսահա-տուութեան փոսը տղէտ ընդհանրութիւնը եւ թիւր ու սխալ կարծիքներ կը մոյցնէ օտարներու մէջ մեր սե-փական ժողովրդի մասին:

Այնպիսի մը նետներ Պ. Լ. Մ. յօդուածին վրայ: Հայը հոս գործող է: Արդար եւ խեղացի նկա-տողութիւն. ամեն նոր գաղթող ժողովուրդ, աննշան քայառութեամբ, գործող է: Ասիկայ շատ հին ճշ-մարտութիւն մ'է: Բայց գաղթող լինելուն համար գործող է, եւ ոչ իր ծուլութեան պատճառով:

Նա գործող է, որովհետեւ Եգիպտոս իր ծննդավայրը չէ, իր հայրենիքը չէ. նա գործող է, որովհետեւ հոս ստիպուած է ողորմութիւնով ապրիլ, որովհետեւ անգործ, անհաս, անտուն է, որովհետեւ չէ կարող մըրցիլ ֆէլլահի հետ: Եւ ինչ-չու՝ չէ կարող, այս կէտը պէտք է լուսարաններ:

Եւրոպայի եւ Ամերիկայի բանւորներն անկարող են մըրցիլ չինացի բանւորներուն հետ, որովհետեւ չինացին յետամուտ, անքաղաքակիրթ է, շատ ողորմելի ու խեղճուկ կարիքներ ունի: Բուժ մը բրինձ—եւ նա գոհ է իր ապրուստէն: Չոր տրամաբանութեամբ ուրեմն, չինացին աւելի աշխատասէր է քան Միացեալ-Նահանգներու բանւորը, քան գերմանացին ու ան-գլիացին: Իտալիայի տնտեսական նեղ վիճակը աշ-խատեւորներու հեղեղ կը ծայթբէ ամեն տարի եւ իտալացի բանւորը կը հեղեղէ ամբողջ հարաւ-արեւ-մտեան Եւրոպան: Օրինակ, Չուիլիէրիային անկարող է մըրցիլ անոր դէմ, որովհետեւ իտալացին յանձն կրնայ ամեն տեսակ աշխատանքներ 2-3 ֆրանք օրա-կանով, իսկ Չուիլիէրիային 4-5 ֆրանքէ պակասով չի աշխատիր, որովհետեւ ատկէ պակաս վարձատ-րութիւնն անոր աւելի զարգացած պէտքերուն չի կրնայ բաւարարութիւն տալ: Հոս մենք մըրցիլ չի

կարողանալու: պատճառը կը գտնենք Չուիլիէրիայու եւ իտալացու զարգացման եւ պահանջներու տար-բերութեան մէջ, իսկ դուք անպատճառ կը պնդէիք «չէ», գովելի խօսքին ծոյլ է, իտալացիէն ալ ծոյլ:

Իսկ Եգիպտոսի մէջ: Հոս գաղթող հայերու մեծամասնութիւնը Պոլ-ստանի հայերն են, վարձուած քաղաքացիներ կենանքին. իսկ անոնց հետ ալ տնիշան փոքրամասնութիւն մը գտնուողներու:

Նայինք, արդեօք ծուլութիւնն է պատճառը որ հայը մըրցիլ չի յաջողիր հոս:

Հայ գաղթականներու մեծամասնութիւնը ար-հեստագործներ են, քիչ մը վաճառականներ եւ մաս մ'ալ օգտավոր մշակներ ու գաւառացի հողագործներ:

Մէկ կողմ տանինք վաճառականները, որովհե-տեւ անոնց մեծամասնութիւնը հոս ընկած են ան-փող, ուրեմն եւ անկարող ինքնուրոյն գործ մը սկսելու: Մենք տրամադիր ենք ընդունելու, որ հայ վաճառականը չի կրնար մըրցիլ Եւրոպայի խո-շոր վաճառականի դէմ, որը զինուած է յաճախ գիտութեան վերջին փաստերով: Բայց ատկէ ի՞նչ կարելի է եզրակացնել: Միթէ կրնանք հայ վա-ճառականի անընդունակութիւնը վերագրել ամբողջ հայ ժողովրդին (որի միայն 5-6 0/0 է վաճառական) մեղադրել զայն ծուլութեան ու տիմարութեան մէջ:

Արհեստագործ մեծամասնութիւնն ինչ կարող էր ընել, ինչով եւ ինչպէս մըրցիլ, երբ գործիք ու խա-նութ չունի, երբ ստակ ալ չունի գանձք գնելու կամ վարձելու:

Պ. Լ. Մ. կը բերէ միակ փաստ մը, որ գաղ-թականին մէկը եկեր յարգելի յանձնաժողովէն խնդրէր է, որ իրեն համար տուն մը վարձեն: Մենք ձեռնեղեցութեան գործի ենք, ամեն բան ուրիշէ կտրասենք». շատ բարի, մենք համաձայն ենք այդ մտքի (բայց ոչ անոր լայնարութեան) հետ: Բայց ա-տոր փոխարէն մենք քանի քանի փաստեր կրնանք բերել եւ ապացուցանել որ եթէ յանձնաժողովը տար այս ինչ կամ այն ինչ արհեստագործին մէկ-երկու գործիքներ, փոքրիկ խանութ մը բռնէր ի՞նչ իր տունած գաւառը յետ կտանէր եւ թէ՛ ընտանիք մը կազմաւոր նախ ձրիակերութեան ու մաւրացիկութեան երկրորդ բռնի ծուլութեան: Այդպիսի փաստեր Գահիթի յանձ-նաժողովը բուսական տեսաւ ու փորձեց: Իսկ Ա-ղերստանդիլայից լոկ գեղեցիկութիւն յայտնեց գաղ-թականներու «աներեսութեան»:

Ուրեմն, պարզ է որ փողազուրկ արհեստագործ չէր կրնար «աշխատասէր» ըլլալ, գործ մը ընել: Վերջապէս չէ՞ որ ամենէն լաւ եւրոպական փո-րագրիչն, օրինակ Կարիին մէջ կարող էր անօթի մեռնիլ ինչպէս Կովկասի մէջ համարեա անօթի կը մնան բաւական թուով ուսեալ երկրագործ-ներ ու գինեգործներ: Տարէ՛ք Կովկաս կամ Ռու-մանիա ամենաւնասիր ֆէս չինող մը, հուստուայէր որ անօթի պիտի մեռնի, եթէ նոյն իսկ եղան պէս աշխատասէր ըլլայ: Այս կը ըզլիս անհատի եւ մի-ջախօսի պահանջներուն տարբերութեան եւ ոչ թէ անհատի ծուլութեան:

Թէ՛ Պոլսեցի արհեստագործ, թէ՛ ընդհանրապէս հոս եկող հայ բանւորը չէր կարող մըրցիլ ֆէլլահի հետ: Ատիկա գուշակելու համար բաւական է միայն քիչ մը ծանօթ ըլլալ քաղաքապետութեան տարրա-կան սկզբունքներու հետ:

Հայը պիտի անգործ մնար, որովհետեւ հայի պա-հանջները աւելի են զարգացած, քան ֆէլլահին: Վերջինս կարող է ապրիլ կէս դահեկանով, կարող է փողոցի մը անկիւն ընկնիլ ու քնանաճալ, Դիոգի-նէսի պէս տակաւ մը կամ մեծ արկղ մը մոտեւ ընկնիլ մէկ ֆէսը կրել իր ծնած օրէն մինչեւ մահը, ինչպէս եւ մի շապիկը հագնիլ առանց լուալու՝ մինչեւ զգա-ռելը եւ այլն: Իսկ Հայը, նա չի կարող այդ ընել, նա այսօր աւելի քաղաքակիրթ է, աւելի պահանջներ ունի: Ահա թէ ինչու՞ առաջուց կրնայինք գուշակել որ հայը պիտի կորսնցնէր ֆէլլահի հետ մըրցման ա-տենը: Ո՛ր երկաթագործն, օրինակ, կը թողնէ օրա-կան 2-5 դահեկանի աշխատող ֆէլլահը եւ կը փորձէ հայ կռանահար մը որ օրական 8-12 դահեկան կը պահանջէ: Բնական է՝ ոչ ոք, ոչ մի գործատէր, իմացք որ յանուն ազգասիրութեան տնգամ հայ գործատէ-րը չի վնասիր իր շահերը եւ հայ գործաւորներ վարձեր:

Ահա մեր կարծիքով, հոս հայու ծոյլ երեւալու պատճառը: Ասոր վրայ աւելցուցէք եւ այն, որ հայը լեզու չը գիտէր, ոչ տեղական, ոչ ալ օտար:

Եթէ վայրկեան մը ենթադրենք նոյն իսկ, որ հայը կարող է արար գործաւորի գնով աշխատիլ,

որ նա դիտէ տեղական եւ այլ ընդունել, այս դէպքի մէջ անգամ հայը պիտի կորսնցնէր. որովհետեւ հայ աշխատչիս վրայ աշխատող ձեռքերու «պահանջ» եւ առաջարկ»: Երբ հայ գաղթականութիւնը հոս խո-թեցաւ, գործի հրապարակն արդէն իսկ բռնուած, լեցուած էր եւ որպէսզի հայը խցի տեղը գործի մէջ եղածներու ձեռքէն, պիտի աւելի աժան, աւելի կտրած գիներով վարձուէր, իսկ այդ հոմանիշ է քաղ-ցածութեան: Թող որ միւս կողմէն մեր քաղաքոր-ծութեան անարամարան ու արտաւոր կողմն աւելի կը մղէ մարդերը դէպի ձրիակերութիւն քան դէպի ձախտի քրտինքով իր հայը շահիլը:

Բուլղարիայ մէջ Պոլստանի արհեստագործ հային առաջարկեցին դառնալ հողագործ եւ նա մերժեց. ծոյլ էր, մարդ մը չկրնար վայրկեանաւոր ձգել իր 30-40 տարուան գրազմանքը եւ ըլլալ երկրագործ:

Ոչ, Պ. Լ. Մ. հայը ծոյլ չէ, Եւրոպայի հետա-գոտուններու եւ ոչ մէկուն վարձիքը գիտէր: Անոնք՝ սկսեալ այս դարու սկիզբները Ռուսիա, Կովկաս, եւ մաս մ'ալ Անատոլիոյ ճամբորդող Բարոն Ֆոն Հաքսթ-հաուզենէ մինչեւ վերջին տարիներս հետգոտող եւ-րոպայի, հայը կը գնէր իր հակապատկեր թուրքի եւ կը համեմատէն Հոլանտայու եւ Չուիլիէրիայու հետ:

Գահիթէ 4 յունիս

Վ. Բ.

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կը լսենք թէ ազգային երկսեռ վարժա-րաններու հոգաբարձութիւնը մտադիր է Գա-լլատեան վարժարանը տեղափոխել աւելի կեդ-րոն թաղի մը մէջ: Խնդիրը երեսփոխանական ժողովոյ որոշման պիտի ենթարկուի:

* *

Հոգաբարձութեան ատենապետ Եռուսեփ Աղիզ պէյ բացատրական նամակ մը ուղղած է մեզ՝ ուսուցչական ծանօթ խնդրոյն առթիւ մեր գիտողութիւններուն ի պատասխան, զոր շաբաթ օրուան թուով պիտի հրատարակենք:

Էջմիածնէն կը գրեն Մշակի — «Սկսել է նոր հոսանք գաղթականների. մայիսի 4ին այստեղ եկան հարիւրի չափ թշուառ եւ մի-անգամայն մերկ գաղթականներ, բաղկացած մեծ մասամբ կանանցից եւ մանր երեխաներից. բոլորն էլ առ այժմ պատասպարուած են վան-քի հիւրատան սենեակներում: Սրանք աշնան ձիւների պատճառով չըկարողանալով անցնել ձիւնապատ սահմանը, ձմեռել էին Բացաշէտի հայ գիւղերում, ուր թշուառութիւնը՝ ահ ու սարսափի հետ՝ ընդհանուր է: Սրանց առեւել, շուտով կուգան էլի մի խումբ նոր գաղթա-կաններ՝ բաղկացած 300 հոգուց»:

Մասնիկ մէջ կարդացինք թէ Եգիպտոսի հայերը կը փափաղին եղեր իրենց առաջնորդ-ունենալ Տ. Վահրամ եպիսկոպոս Մանկունին: Յարգելով հանդերձ Մանկունի Սրբազանին անձը՝ եւ իրեն նման եկեղեցական մը յարմար գտնելով այս առաջնորդական պաշտօնին, կը զարմանանք միայն թէ ո՛ր թղթակցի խելքին կը փչէ ասանկ երեւակայական լուրեր հաղոր-դել, երբ Եգիպտոսի հայերը ոչ միայն Վահ-րամ եպիսկոպոսի վրայ մոռած չունին, այլեւ առաջնորդական ընտրութեան վրայ մը-տածելն ալ յետաձգած են... յունական կաղանդին:

Ռուսիոյ կայսրը Պ. Աղեքսանդր Մանթաշ-եանին շնորհեր է Ս. Աննա պատուանշանը՝ ժապաւենով: Պ. Մանթաշեան ծանօթ է ոչ միայն իր մեծ գործարանատէր, այլեւ ազ-

գային ու կրօնական հաստատութեանց տա-
տարող հայ մը : Դեռ վերջերս Թիֆլիզի վան-
քի Մայր եկեղեցիին նուիրած էր՝ անոր կից
գտնուած կալուած մը , 3000 լուսնի վճարե-
անոր գնման համար և 1000 լուսնի ալ
տուած էր եկեղեցիին նորոգութեան :

Ինչպէս արդէն կ'սպասուէր, հարիւր հո-
գիի մօտ բաշխութիւն մը ներկայ գտնուեցաւ
շաբաթ գիշեր, Ընթերցասիրաց ընկերութեան
երեկոյթին :

Գործադիր Ժողովոյ անդամները մեծ հա-
ճոյակատարութեամբ ընդունեցին իրենց հրա-
ւիրեալները և մինչև վերջը աշխատեցան տան
պատիւները անթերի կատարելու :

Յայտագիրը կատարելապէս գործադրուե-
ցաւ : Տիկին Վ. Նուարդ իր արուեստագէտի
ճարտարութեամբ երգեց երեք կտորներ .
ջերմ կերպով ծափահարուեցաւ և հանդիսա-
կաններու փափաքը լրացնելու համար կըրկ-
նեց իր վերջի երկու հատուածները : Թըր-
եանց, ինչպէս միշտ, քահանայներով լեցնել
տուած ամբողջ սրահը : Տիար Ն. Աղապարմ
տեղեկագիր-ատենախօսութիւն մը արտասա-
նեց և ազգին քաջալերութեան արժանի ներ-
կայացուց ընկերութիւնը :

Տիար Յ. Սեթեան արտասանեց գլխաւոր
բանախօսութիւն մը որուն մէջ շատ դպացուն
և շատ գեղեցիկ շեշտեր կային . իր նիւթն
էր՝ դաղթականութեան մէջ գտնուողի մը ԸՂ-
դացածները :

Հանդէսը աւարտելէ առաջ, հանդիսա-
կաններու կողմէ հրապարակաւ և մասնաւո-
րապէս շնորհակալութիւններ յայտնուեցան
Գործադիր Ժողովոյ անդամներուն :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի պաշտօնական թերթը իր եր-
կուշաբթի օրուան թիւով հրատարակեց ներ-
քին գործոց նախարարութեան հետեւեալ զե-
կոյցը .

«Եգիպտական կառավարութիւնը կը ծա-
նուցանէ շողենաւային ընկերութիւններուն և
որոց որ անկ է, թէ նկատելով որ վերջերս
բազմաթիւ յոյներ և ուրիշ օտարազգիներ ե-
կած են Եգիպտոս, առանց ապրուստի ո՛ր և
է միջոցի, յետ այսօրիկ այդ պայմաններուն
մէջ համառոտ ո՛ր և է անձի ցամաք ելլելը պի-
տի արգիլուի : »

Ըստ այսմ, հրահանգ տրուած է Աղեք-
սանդրիոյ և Բօռ-Սայիտի նաւահանգստի իշ-
խանութիւններուն, որ շողենաւէ դուրս չի
հանուին ու ցամաք չընդունուին այն օտարա-
կանները որոնք ապրուստի միջոց ունենալին
չեն կրնար հաստատուի :

— Պաշտօնական թերթը կը ծանուցանէ
թէ ներքին գործոց նախարարութիւնը արտօ-
ններ է դեղագործ Պ. Յակօբ Ասատուր Մար-
կոսեանը իր արուեստն ի գործ դնել Եգիպ-
տոսի մէջ :

— Լորտ Գրօմըր և Քիլֆեր փաշա որոնք
Աղեքսանդրիա կը գտնուէին, Գահիրէ վերա-
դարձան :

— Պաշտօնական թերթը իր շաբաթ օր-
ուան թիւին մէջ ամբողջովին հրատարակած է

Շէրիի դատարաններու վերակազմութեան նոր
օրէնքը, որ կը բաղկանայ 103 յօդուածէ, նա-
խարարաց խորհրդին կողմէ պատրաստուած
և Բարձր Խորհրդին կողմէ վաւերացած : 1880
յունիս 17էն ի վեր բաշխուիտու կրած չէր
այս օրէնք :

— Կիրակի օրը Թանթաի մէջ հրդեհ
ծագելով, երկու հարիւրէ աւելի տուններ այ-
րել են : Գահիրէէն յատուկ կառավարմամբ
դրկուած ջրհաններ դժուարաւ կրցեր են հըր-
դեհին առաջին ատենը, որ կարծաւորեալ
տատակաշունչ խաւսինէն : Բայ ի նիւթական
տհաղին փնտէ, զոր պատճառած է այս ա-
ղէտ, մարդու կորուստ ալ կայ, մեռածներ
ու վիրաւորուածներ : Նոյն օրը, քաղաքին շր-
ջակայ գիւղերուն մէջ ալ հրդեհներ պատա-
հել են :

Թանթա կը գտնուի Գահիրէի ու Աղեք-
սանդրիոյ մէջտեղ . վաճառաւոր քաղաք մըն
է և իր դիւաւոր արտագրութիւններն են
բամպակ, եգիպտացորեն և այլն : Բնակիչնե-
րուն թիւն է 57,288 : Հունձքեր ալ այրել
են ընդարձակ տարածութեան մը վրայ : Հըր-
դեհը ծագել է խաւսաց գերեզմանատան
շրջակայ տուններէն և շատ չանցած փոխան-
ցուել է նաեւ խաւսներու թաղին : Բազմա-
թիւ ընտանիքներ անպատուար կը մնան կա-
ռավարութեան կողմէ նպաստ խրկուեցաւ :

— Խամինը չանհետացաւ մայիսին հետ,
ինչպէս կ'ըլլար սովորաբար ամեն տարի . կի-
րակի առաւօտէն մինչև իրիկուն անընդհա-
միջ անապատի այդ խորշակը ու հեշտօցիչ
օդ մը կար Գահիրէի մէջ . ջերմաչափը շուրջ
մէջ 38 աստիճան ցոյց կուտար :

— Տորթ. Քոֆս որ Հնդկաստան գացած
էր ժամտախտի վրայ միջրոտաղնութիւններ
կատարելու, մօտեւ Եգիպտոս պիտի այցելէ :

— Առողջապահական վարչութիւնը բա-
յարձակապէս արգիլեց Սուրիայէն Եգիպտոս
ոչխարի ներմուծումը՝ այդ նահանգին մէջ տի-
րող պաճարախտին պատճառաւ : Բօռ-Սայի-
տէն քանի մը առեւտրական տուններ իսկոյն
հեռագրեցին Աւստրալիա որ սառցոյցի մէջ
պահուած մեծաքանակ միս խրկուի Եգիպտոս :
Գաղափար մը տալու համար թէ պաճարախ-
տը սրբան փնտ կրնայ հասցունել երկրին,
եթէ խիտ անօրինութիւններ ձեռք չառնուին,
կը յիշեցունեն թէ 1865ին երբ անասնոց հի-
ւանդութիւն կայ եղեր այստեղ, 400,000 եղ
ու ոչխար զոհ գացեր են, 3,000,000 ոսկի
փնտ պատճառելով, առանց հաշուելու
երկրագործութեան կրած վնասը :

— Ստենէն հեռագիր մը կը հաղորդէ թէ
ձիտտէի մէջ ժամտախտի կասկածելի դէպք
մը պատահել է :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»-Ի

Ս. Օ. — Բերմա (վերին Եգիպտոս). — Ձեր երկի
հեռագիրը ստացանք : Ձեր ջերմ ու անկեղծ համակ-
րանքէն խորապէս զգածեալ ենք :

Յ. Բ. — Գահիրէ — Առ այժմ անկարելի է :
Կ... — Աղեքսանդրիա — Նքէ չենք սխալի,
այդ խնդիր 1864ին տեղի ունեցած է :

Մեր Բարիկի ընթերցողներուն. — Եգիպտոս
դուրս առաքին անգամ Բարիկ կը ստանանք «Փա-
րոս» մասին տպագրութիւններ : Երկուսն Մար-
տիկոյ Սուրհանդակը բերու ձեռնամուկներ : Ձեր
համաձայնութիւնը քաջալերել է մեզի համար : Ենթա-
կալուքիւն :

ԹՈՒՐԹԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Թուրքիոյ պատարին գործոց նախարար
Թէֆիկ փաշայի և Կ. Պոլսոյ դեսպաններուն
միջեւ սկսուած բանակցութիւններն ի մասին
հաշտութեան պայմաններուն՝ ելքի մը յան-
գելէ շատ հեռու են տակաւին : Ուշադրու-
թեան արժանի միակ լուրը զոր հեռագրա-
կան կրկին գործակալութիւններն հաղորդե-
ցին այդ դեսպանական գումարման մէջ յայտ-
նուած կարծիքներուն նկատմամբ, Անգլիոյ,
Փրանսոյի և Իտալիոյ ներկայացուցիչներուն
առ յայտարարութիւնն է թէ այդ երեք տէ-
րութիւններ հակառակ են Թեաքիան Թուր-
քիոյ թողութեան, — պահանջում մը որուն բա-
յարձակապէս կը հակառակի Գուր և որուն
համամիտ չեն երեւնար նաեւ Ռուսիա, Գեր-
մանիա ու Աւստրիա, գէթ իրենց լուրերով :

Արդէն, օտմ կառավարութիւնը գործնա-
կանապէս այ ցոյց կուտայ՝ Թեաքիայէն ոտ-
քը դուրս չի հանելու իր արամադրութիւնը,
կառավարիչ, գաղափար, ոստիկան, ուսուցիչ,
հեռագրական պաշտօնակց եւ այլն գրկելով այդ-
նորասոց նահանգը :

— Երէկուան եւրոպական Սուրհանդակով
առնուած թերթերը կը հաղորդեն թէ Պուլ-
կար կառավարութիւնը զինուորական պատ-
րաստութիւններ տեսնելու վրայ ըլլալով, մա-
նուանդ հաշտութեան բանակցութեանց սկիզ-
բէն ի վեր, Մեծ-Եպարքոսը բացատրութիւն
պահանջներ է Կ. Պոլսոյ պուլկարական գործա-
կատարէն :

— Իտալական թերթերուն խօսքին նայե-
լով՝ 40 մարտանաւերէ բաղկացած անգլիա-
կան հսկայ նաւատորմ մը հեջեհական ջուրե-
րը պիտի երթայ ի մօտոյ : Միջերկրականի
աւստրիական նաւատորմն ալ Սելանիկի առջեւ
պիտի համախմբուի, կրտսիս Ռուսիա ալ 40,000
զօրք համախմբելու վրայ է եղեր Կովկասեան
սահմանադրիւն վրայ :

Ձերք գիտեր թէ այս վերջին լուրերը ո՞ր
ատիճան ստոյգ են, վասնզի տարիէ մը ի
վեր շատ կարգաւորեց անգլիական նաւատոր-
մի ու ռուսական զգաւորական համախմբման
լուրեր, որոնք երբեք չ'իրականացան :

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԱՐԻՉ. 8 Յունիս — Գուր կը շարունակե-
ր ընդդիմանայ Թեաքիան եւ չի տալու : Սուրիոյ մէջ
եւ միջեւ իսկ ի Պաղեստին, երկու հեծնազուգ
զենքի կը կոչէ :

— Կր հուսանեմք թէ Տերաքիան բացաւրաբէր
պիտի պահանջեն Թուրքիայէն՝ Թեաքիա որկուած
զինուորական հարգօրինակներուն համար :

ԱՅԻՆՔ. 8 Յունիս — Շեյքեհ կառավարութիւնը
ճանուցաւ մը ուղղելով Տերաքիան, կը
զանգաւի խալիքի եւ Թեաքիոյ մէջ բուրբուր
կատարած խնդիրներէն :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ կայսերական դերդաստանը յու-
նիսի սկիզբը իր բնակութիւնը Չարթի—Սէ-
րօէն Բէդէհ-Տօֆի պալատը փոխադրել է,
Չարթի կենաց դէմ դաւադրութիւն մը երե-
ւան երաժ ըլլալուն պատճառով : «Բըդէդ Ռէ-
քիւպիք Փրանսէզ» կը պատմէ թէ պալատան
գաղափարներն մէջ օտարական մը գտնուելու
բռնուել է, բռնն ընդդիմութենէ մը ետք :
Վրայէն գտնուել են ըզբողբէր մը ու դաշոյն
մը, և խոտտովներ է թէ Չարթ սպաննելու
դիտաւարութիւն ունէր : Ուրիշ աղբիւրէ առ-
նուած տեղեկութեան մը նայելով, ձեռքաւա-
ռած անձը Սիւլթոֆ կը կոչուի և խնդ է
եղեր :

— Փրանսական Հանրապետութեան նա-
խագահ Պ. Յէյրիս Յօռ, ընկերաշէյութեամբ
արտաքին գործոց նախարար Պ Հանթօյի,
յուլիս 25ին Բէդէհ-Տօֆի պիտի ուղեւորի :
Հաւանաբար Կ. Պոլսէն անցնի :

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷՔԻ
ՍԵՇԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՐԱՆՈՒՐ ՄԵՐԵԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԳԱՄ»
ԽԱՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԴԻՆ ՍԻԿԱՌԷՔՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ	1000 հաար	2 1/2 Անգ. ոսկի
Խըտիլեալ	" "	2 " "
Պալատական	" "	1 1/2 " "
Պօհճա	" "	1 1/4 " "
Նաթիւրէլ	" "	1 " "
Փօռ	" "	20 փրանք

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՋՂԱՅԻՆ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ արժի, շնչառական գործարաններու, ար-
եան եւ ջղային հիւանդութիւններու:

Կը յանձնարարուի հեծելանիւ գործածողներուն:
Սփանջելի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մքերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱՆԿՅՈ—
Եզիպտական դեղարանը Էզպէֆիե, Դահիւրէ:

ՀԱՄՄԱՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱՆԻՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՅ Է

Էրիկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10
եւ իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Պարբար եւ կիրակի օրերը միմիայն Էրիկ մարդոց համար
կիրակի եւ տան օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գոյ Է:

ՀՐԱՆՑ ԱՋԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ դէմ բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արգուկէ շապիկներ եայլն սո-
վորական զիններով:

Ուզողներու համար լուացարարութեան
հիւղ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախող-
ներուն ճերմակեղէնները զատ զատ լուարու
գնահատելի դրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախորդաց ճերմակե-
ղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուներէն
եւ պիտի վերադարձնէ:

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԷ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱՋԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՑ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՅՈՒՆՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզիպտոսի որ եւ է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնա-
մք եւ փութով կը կատարուին:

Վայրկենական սպազորութիւն այցեֆարսերու եւ տոմսերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ սոմ օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4գ.	օմ նիւյ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	օմ նիւյ. 1,2,3,4գ.	էքորթէս 1, 2 4գ.	օմ նիւյ. 1,2,3,4գ.	էքորթէս 1, 2 4գ.	օմ նիւյ. 1 2 3 կարգ	էքորթէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
»	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	էքորթէս 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	օմ նիւյ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	օմ նիւյ. 1,2,3,4գ.	էքորթէս 1 2 4գ.	Խառն առտ.	օմ նիւյ. 1,2,3,4գ.	էքորթէս 1 2 4գ.	օմ նիւյ. 1 2 3 կարգ	էքորթէս 1 2 3 կարգ
Ալեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	էքորթէս 2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	էքորթէս 12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	» —	9 12	10 28	11 —	առտ. 2 39	5 43	6 10	9 40	2 56
»	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	էքորթէս 2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՒՈՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՒՈՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
»	էքորթէս 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա	մեկ. 12 33	7 53	Խամադիա	» 1 20	7 5
»	» —	» —	»	» —	» —
Ջակարդիկ	» 1 34	8 54	»	» —	» —
»	մեկ. 1 44	9 4	»	» —	» —
Խամադիա	մեկ. 3 40	1 —	»	» —	» —
Սիւէզ կայարան	» —	5 —	»	» —	» —
Տօք (քարափ)	» 6 55	—	»	» —	» —